ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՈՒՂԵՐՁ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՔՎՈՐՈՒՄԻ ԱՆԴԱՄԻ ԿՈՂՄԻՑ

Սիրու՞մ եք ինձ

Նախագահ Յորգ Քլեբինգաթ,
ԱԵՏ 1-ին խորհրդական

Հետևյալ մտքերի փոխանակությունը Քրիստոսի և Պետրոս Առաքյալի միջև պարզաբանում է, որ ուրիշների հետ ավետարանով կիսվելու մեր պատրաստակամությունը Փրկչի նկատմամբ մեր ունեցած սիրո խորության ուղղակի արտացոլումն է: «Սիմո՛ն, Հովնանի որդի, սիրո՞ւմ ես ինձ: Այո՛, Տե՛ր, դու գիտես, որ սիրում եմ քեզ: Կերակրի՛ր իմ գառներին» (Հովհաննես ԻԱ.15–17):

Այն հարցը, որը Քրիստոսն անհատապես առաջադրում է մեզ այսօր, հետևյալն է. «Դուք արդյոք բավականաչափ սիրո՞ւմ եք ինձ, որ մարդկանց հրավիրեք սովորել իմ մասին»: Խնդրում եմ ինքներդ ձեզ տվեք այս հարցի պատասխանը: Որոշեք, թե արդյոք ձեր սերը Աստծո և ձեր հայրենակիցների նկատմամբ բավականաչափ ուժե՞ղ է, որ նրանց հրավիրեք հետևել Քրիստոսին:

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է. «Տղամարդը [կամ կինը], ով լի է աստվածային սիրով, չի գոհանում միայն իր ընտանիքի օրհնություններով, այլ մտածում է նաև աշխարհի բոլոր մարդկանց մասին, մտահոգ է օրհնել ողջ մարդկային ռասային» (Ջոզեֆ Սմիթ, ԵՊ, հատոր 4, էջ 227): Երբ մենք միացանք եկեղեցուն, խոստացանք, որ «հոժար ենք մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը»՝ ունենալով «վճռականություն՝ ծառայել Նրան մինչև վերջ»: Այսպես վարվելով՝ մենք խոստացանք թույլ տալ, որ մեր լույսը այնպես փայլի մարդկանց առջև, որ նրանք կարողանան տեսնել մեր լավ գործերը, և փառաբանեն մեր Հորը, ով երկնքում է (Մատթեոս Ե.15–16): Հետևաբար, մենք խոստացանք ՉԹԱՔՑՆԵԼ մեր հավատքը և եկեղեցու անդամությունը, այլ դնել գրվանի վրա: Տերը նաև խոսում է մեզ հետ, երբ ասում է Օլիվեր Քաուդերիին, որ նա պետք է «շարունակի կրել իմ անունն աշխարհի առաջ. . . Եվ նա չպետք է ենթադրի, թե կարող է չափից ավելին ասել՝ ի պաշտպանություն ինձ. . . Եվ բոլոր ժամանակներում, և բոլոր տեղերում նա պիտի բանա իր բերանը և հայտարարի իմ ավետարանը, ինչպես մի փողի ձայնով՝ թե՛ ցերեկ, թե՛ գիշեր» (ՎԵՈՒ 24.10–12):

Նախագահ Եզրա Թաֆթ Բենսոնն ուսուցանել է. «Մենք չենք կարող խուսափել դրանից: Թող ոչ մի տղամարդ կամ կին չմտածի, որ կախված մեր ապրելու վայրից կամ հասարակության մեջ մեր գրաված դիրքից, կամ էլ մեր աշխատանքից և կարգավիճակից, մենք ազատված ենք այս պատասխանատվությունից: Տիրոջ Եկեղեցում անդամությունը պարգև է և օրհնություն, որը Տերը տվել է մեզ մահկանացու կյանքում, և Նա ակնկալում է, որ մենք կկիսենք այդ օրհնությունը նրանց հետ, ովքեր չունեն այն» (Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոն, ապրիլ 1985, ԳՀ):

Ավետարանով կիսվելու մեր պատրաստակամությունը՝ ուրիշներին հրավիրելը մեր Եկեղեցի, Մորմոնի Գիրքը ընթերցելը, ընտանեկան տնային երեկոյին մասնակցելը կամ հանդիպելը միսիոների հետ, նույնքան է արտացոլում մեր սերը դեպի Փրկիչը, որքան մեր սերը հայրենակիցների նկատմամբ: Երեց Ռասսել Մ. Բալլարդն ուսուցանել է. «Դուք ստիպված չեք լինել ընկերական անձնավորություն կամ ազդեցիկ, հորդորիչ ուսուցիչ: Եթե ունեք հաստատուն սեր և հույս ձեր մեջ, Տերը խոստացել է . . . դուք շփոթված չեք լինի մարդկանց առաջ; [և] կտրվի ձեզ . . . հենց այդ պահին, թե ինչ ասեք» (Երեց Ռասսել Մ. Բալլարդ, հոկտեմբեր 2013, ԳՀ):

Եկեք փոխարինենք մեր վախը սիրով և աղոթենք, որ քաջություն ունենանք ուրիշներին հրավիրել՝ գործելու: Մեր հավատքը կենտրոնացնելով Հիսուս Քրիստոսի վրա, եկեք զարգացնենք մեր մեջ մի սովորույթ, որ հրավիրենք ուրիշ մարդկանց հետևողաբար, բնական և ընկերական ձևերով սովորելու Քրիստոսի վերականգնված ավետարանի մասին: Ամեն պարագայում թող մեզ մոտ լինեն գրքույկներ, հրավիրատոմսեր կամ նույնիսկ Լիահոնա ամսագրի կամ Մորմոնի Գրքի օրինակներ: Մեր առավոտյան աղոթքներում եկեք խնդրենք Երկնային Հորը հավատքով մեզ ուղեկցել այնպիսի մեկի մոտ, ում մենք կարող ենք հրավիրել՝ գործել: Եվ եկեք միշտ հիշենք՝ քանի որ մարդիկ ունեն ազատ ընտրության իրավունք, մենք չենք կարող «ստիպել» ուրիշ մարդկանց հետաքրքրվել ավետարանով կամ ցանկանալ մկրտվել: Բայց մենք կարող ենք բոլորին հրավիրել դեպի հայտնագործությունների ճանապարհորդության տանող նավ նստել: Թող մեզանից յուրաքանչյուրը բնական և ընկերական ճանապարհներ գտնի ուրիշներին հրավիրելու՝ սովորել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի մասին: Մենք հաջողության ենք հասնում, երբ հրավիրո՛ւմ ենք:

Եկեք բոլորս ուշադիր լինենք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խոսքերին. «Թող մենք միշտ լինենք խիզախ և պատրաստ՝

պաշտպանելու այն, ինչին հավատում ենք, և եթե պետք է կանգնենք միայնակ այդ ժամանակ, թող որ կատարենք դա այնքան խիզախորեն, զորեղացած այն գիտելիքով, որ իրականում մենք երբեք միայնակ չենք, երբ մենք կանգնում ենք մեր Երկնային Հոր հետ» (Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն, հոկտեմբեր 2011, ԳՀ):

Ապրեք և գործեք այնպես, որ նրանք ովքեր չգիտեն Աստծուն, ցանկանան ճանաչել Նրան, որովհետև ճանաչում են Ձեզ: ■

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եկեղեցու ներկայացուցչի ելույթը ավանդական և համաշխարհային կրոնների հինգերորդ համագումարում

Արևելյան Եվրոպայի հասարակական գործերի բաժին

Երեց Քլեբինգաթի ելույթը համագումարում

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Յոթանասունի առաջին քվորումի անդամ և (այդ ժամանակ) տարածքի նախագահության երկրորդ խորհրդական՝ Երեց Քլեբինգաթը դարձավ Եկեղեցու երկրորդ ներկայացուցիչը, ով ելույթ ունեցավ երեք տարին մեկ գումարվող կրոնների համաշխարհային համագումարում: Յոթանասունի քվորումից՝ Երեց Պոլ Բ. Փայփերը, ով ուղեկցում էր Երեց Քլեբինգաթին, ելույթ էր ունեցել 2009 թվականի համագումարում:

Այս տարվա մասնակիցների թվում էին Ղազախստանի նախագահ՝ Նուրսուլթան Նազարբաևը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար՝ Բան Կի-Մունը, Հորդանանի թագավոր՝ Աբդուլլահ Երկրորդը, Ֆինլանդիայի նախագահ՝ Սաուլի Նիինիստյոն, Եթովպիայի նախագահ՝ Մուլատու Տեսհոմը և քրիստոնեական, իսլամական, հուդայական, բուդդիստական, տաոիզմի, հինդուիզմի, շինտոիզմի, զրադաշտականության և մի քանի ՀԿ-ների այլ ներկայացուցիչներ, ընդհանուր թվով 80 պատվիրակություն՝ 42 երկրներից:

Հռոմեական կաթոլիկ պապին ներկայացնում էր Ժան-Լուի Պիեր Թորանը՝ կաթոլիկ եկեղեցու ֆրանսիացի կարդինալը, և Հռոմեական կուրիայի միջկրոնական երկխոսության հայրապետական խորհրդի նախագահը:

Համագումարի թեման կենտրոնացած էր աշխարհի կրոնական առաջնորդների միջև երկխոսության, փոխադարձ հարգանքի և փոխըմբռնման ձևավորման շուրջ: Իր ելույթում Երեց Քլեբինգաթը նշեց, որ խաղաղության, անվտանգության և ներդաշնակության հասնելու համար «. . . մենք պետք է իսկապես ի նկատի ունենանք այն, ինչ ասում ենք: Մենք պետք է անկեղծ լինենք միմյանց բարեկեցության և միմյանց հանդեպ մեր բարի մտադրությունների հարցերում»: Նա նաև ասաց, որ խաղաղության, անվտանգության և ներդաշնակության կարելի է հասնել պարզապես ձգտելով միմյանց մասին ավելին իմանալուն: «Ես կոչ եմ անում բոլորիս շարունակել սովորել միմյանց մասին, հասկանալ միմյանց վարդապետությունները և հավատալիքները, խորությամբ բացահայտել տարբեր կրոնների համոզմունքների առանցքը և իմաստը: Ճշգրիտ տեղեկության վրա հիմնված ճշմարիտ գիտելիքը կարող է օգնել փարատել վախը», – ասել է Երեց Քլեբինգաթը: ■

ՏԵՂԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևան Հայաստան ցցի 2015 թվականի համաժողովը

Հասվիրա Մինասարյան, Երևան ճյուղ, Երևան Հայաստան ցից

Մայիսի 23–24-ը տեղի ունեցավ Երևան Հայաստան ցցի համաժողովը: Համաժողովի հյուրերն էին Երեց Դոնալդ Լ. Հոլսթրոմը՝ Յոթանասունի Նախագահությունից և Երեց Բենեթը՝ Արևելյան Եվրոպայի Տարածքային Նախագահությունից՝ իրենց կանանց հետ: Բարձրագույն Իշխանավորների այցելությունը հրաշալի ոգեշնչում և հոգևոր զորակցություն է անդամների համար: Համաժողովի գլխավոր նիստի ժամանակ Նախագահ Հովհաննիսյանը՝ ցցի Նախագահը, ոգեշնչեց անդամներին չանտեսել փոքր միջոցները, որոնցով Տերը մեծ հրաշքներ է գործում և շփոթեցնում իմաստուններին: Նա նշեց 8 փոքր բան, որոնց հետևելով անդամները կզորանան և մեծ գործեր կանեն. (1) ջանասիրաբար աղոթել, (2) սուրբ գրություններն ուսումնասիրել անհատապես և ընտանիքով, (3) ամեն կիրակի հաղորդություն ընդունել, (4) հավատք, հույս, սեր և գթություն զարգացնել, (5) ծառայելով միմյանց՝ կոչումները մեծարել, (6) նախագահներին՝ իրենց հոտի մասին հոգալ, (7) քահանայություն կրողներին՝ կիրառել քահանայությունը և մարդկանց օրհնել, (8) տնային և այցելող ուսուցիչներին՝ անդամներին այցելել և նրանց մասին հոգալ: «Այդ փոքր բաները մեծ օրհնություններ են բերել իմ կյանք և կօրհնեն նաև ձեր կյանքը», վկայեց Նախագահ Հովհաննիսյանը: Համաժողովի մյուս ուղերձներից էին՝ «Կանգնել սուրբ տեղերում», «Շողալ և բարձր պահել Քրիստոսի լույսը», «Հանգստյան օրը սուրբ պահել» և «Վերականգնել մկրտության ուխտերը»: Քննարկվեց անդամների, ընտանիքների և խորհուրդների դերը Տիրոջ փրկության աշխատանքի արագացման գործում: Նախագահ Հոլսթրոմն իր ուղերձում գովաբանեց եկեղեցու անդամներին, նշելով, որ նրանց մեծ մասը Եկեղեցուն միացած առաջին սերունդն է իր ընտանիքում և իր հավատարմությամբ հիմք է դնում գալիք սերունդների օրհնության համար: Նա խոսեց Եկեղեցու և Ավետարանի փոխկապվածության մասին: Որքան էլ որ Եկեղեցին հիանալի է իր կառուցվածքով, եթե Եկեղեցում ակտիվ լինելը մենք դիտում ենք որպես վերջնանպատակ, ապա վտանգ կա: Հնարավոր է ակտիվ լինել Եկեղեցում, բայց քիչ ակտիվ լինել ավետարանում: Ավետարանը հավերժական է, ավետարանի տարրերը, սովորաբար, քիչ նկատելի են և չափելու համար ավելի դժվար են, բայց հավերժական տեսակետից դրանք ավելի մեծ կարևորություն ունեն: Եկեղեցու նպատակն է՝ օգնել մեզ ապրել ավետարանով: Նա մանրամասնորեն անդրադարձավ փրկարար արարողություններին՝ խոսելով Մկրտության և Սուրբ Հոգու պարգևի, քահանայություն ստանալու, տաճարային արարողությունների մասին և կոչ արեց անդամներին մտածել հաջորդ արարողության մասին, որը նրանք դեռ չեն ստացել: Արարողությունները կատարելը և պահելը կօրհնի մեզ հավերժական կյանքով, որն Աստծո ամենամեծ պարգևն է: Մենք պետք է հավատարիմ մնանք, իսկ արարողություններն ու ուխտերը մեզ ուժ են տալիս համբերել մինչև վերջ: «Մեծ օրհնություն է ապրել այն ժամանակ, երբ երկրի վրա տասնհինգ ապրող առաքյալ կա, որոնք Տիրոջ մարգարեները, տեսանողները և հայտնողներն են և կրում են Աստծո քահանայության բոլոր բանալիները, իսկ ավագ Առաքյալը՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, լիազորված է գործադրելու բոլոր այդ բանալիները մարդկանց օրհնության համար», վկայեց Նախագահ Հոլսթրոմը: ■

Նախագահ Հոլսթրոմը և մյուս հյուրերը ողջունում են անդամներին համաժողովից հետո

«Ո՞վ դուք, որ մտնում եք Աստծո ծառայության մեջ»

Ռուզաննա Ասուլյան, Արաբկիր ծուխ, Երևան Հայաստան ցից

Երիտասարդ ամուրիները հավաքվել են Աստծո ծառայության նավի շուրջ

Հուլիսի 8–11-ը տեղի ունեցավ Հայաստանի Երևան առաքելության երիտասարդ ամուրիների համաժողովը, որին մասնակցում էին ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի բազմաթիվ երիտասարդներ: Տիրոջ ծառայության մեջ մտնելը հիանալի թեմա էր համաժողովի համար, որի ժամանակ մասնակիցները հնարավորություն ունեցան կյանքի կոչել ծառայության խորհրդանշական նավը, որի առագաստները հիշեցնում էին հետևյալ ճշմարտությունը. «մի զարմանալի գործ է առաջ գալիս մարդկանց զավակների մեջ» (ՎևՈւ 4.1) վերջին օրերին: Համաժողովի թիմային աշխատանքները հիշեցնում էին վերջին օրերում մեծ թվով տաճարների կառուցումը, ընտանեկան պատմության աշխատանքի տարածումը, միսիոներական ծառայության տարիքի իջեցումը և չափանիշների բարձրացումը, երիտասարդների և սեմինարիայի ուսումնական նոր ծրագրերի գործարկումը և մեր օրերի այլ կարևոր գործեր, որոնց համար պետք է Տիրոջը ծառայել «ողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով» (ՎևՈւ 4.2): Համաժողովի դասերին ուսուցանվեցին փրկարար նավերի ու փրկարար աշխատանքների, կյանքի ալեկոծությունների ու հավատքի, նավի ղեկի ու մարգարեների դերի, կանչված լինելու և ընտրված չլինելու, ձուկ որսալու և քահանայության ծառայություն կատարելու և այլ սկզբունքների մասին: Երիտասարդները հնարավորություն ունեցան ծառայություն մատուցել՝ տարածք մաքրելով, խոտ հնձելով, քար կրելով, խոհանոցում օգնելով և այլ կամավորական աշխատանքներ կատարելով: Շատերին դուր եկավ «Փարոս» խաղը, որը ամրապնդեց ծովային թեմաներով ուսուցանվող վարդապետությունները ու սկզբունքները՝ իմաստալից ու հետաքրքիր դարձնելով համաժողովի մասնակցությունը: «Ես երբեք չէի եղել բարի կամքով այդքան շատ երիտասարդների շրջապատում, որոնք անկեղծ ընկերություն են անում», ասաց Դիանան՝ համաժողովի հյուրերից մեկը: «Համաժողովում սիրո մեծ մթնոլորտ էր զգացվում: Որպես ղեկավար՝ ես շատ բան սովորեցի ինչպես մյուս ղեկավարներից, այնպես էլ երիտասարդներից», նշել է ցցի նախագահ՝ Հովիկ Հովհաննիսյանը: Համաժողովի վերջում նավի առագաստները բարձրացվեցին և ծառայության նավը նավարկության գնաց համաժողովի երգի ներքո. «Հավատքով ու սիրով կծառայե՞նք Տիրոջը»: ■

Պատրաստվելով մտնել Աստծո ծառայության նավը

Համաժողովի ներկայացուցիչները

ՏԵՂԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ՁԱՅՆԵՐԸ

Աստված ապրում է

Իգիթ Պողոսյան, Մալաթիա ծուխ, Երևան Հայաստան ցից

Ես ծնվել եմ Շամշադինում այն տարիներին, երբ կրոնի մասին շատ բան չէինք սովորում: Սակայն մեր ընտանիքում ընդունում և հարգում էինք Աստծուն: Ես 10 տարեկանից հիշում եմ հորս ասած աշուղ Ջիվանու այն միտքը, որ աշխարհի բոլոր գրքերը հավաքես ու շաղախես, մի Ավետարան չի դառնա: Այդ միտքը 70 տարի իշխում և թագավորում է մեր ընտանիքում: Դեպի ավետարանի սուրբ ճանապարհը առաջինը եկավ մեր ընտանիքի չորրորդ երեխան՝ Վարուժանը: 2008թ. ես և կինս գյուղից քաղաք տեղափոխվեցինք՝ Վարուժանի ընտանիքի հետ համատեղ ապրելու: Չնայած Սուրբ Հոգու մասին մենք գաղափար չունեինք, բայց մեր հոգու մեջ Նրա տարրերն ունեինք և զգացինք, որ մենք նույնպես պետք է գնանք այն ճանապարհով, որով շարժվում էր մեր տղայի ընտանիքը: Ամուսիններով սկսեցինք ուսումնասիրել վերականգված Ավետարանը, կարդալով ձեռքի տակ եղած գրականությունը (ինքս՝ ոչ միայն կարդում, այլ նաև՝ կոնսպեկտավորում էի): Այսպիսով, մի երկու տարի պահանջվեց, որպեսզի շատ թե քիչ սովորեինք Հիսուս Քրիստոսի Եկեղեցու այբուբենը: Հոգեբանական տեսակետից մենք պատրաստ էինք, և մինչ այդ ոչ մի Եկեղեցու չհարելով, 2010 թվականին մեր թոռնիկի հետ մկրտվեցինք Հիսուս Քրիստոսի Եկեղեցում և դարձանք Եկեղեցու անդամ: Երկու տարի անց հնարավորություն եղավ այցելելու Տիրոջ տաճար և կնքելու մեր 55 տարվա ամուսնությունը հավերժության համար: Եկեղեցուն միանալուց 18 տարի անց կատարվեց նաև մեր տղայի իղձը, և նա կնքվեց մեզ հետ որպես հավերժական ընտանիքի անդամ: Միրում եմ կարդալ սուրբ գրությունները և կոնսպեկտավորել մեր Եկեղեցու բոլոր նախագահների կյանքն ու գործունեությունը: Ափսոսում եմ, որ Ջոզեֆ Սմիթը, այդ ահռելի աշխատանքն անելով և այդքան շատ չարչարվելով, վերականգնեց Քրիստոսի Եկեղեցին, բայց լիարժեք չվայելեց իր աշխատանքի պտուղները երկրի վրա: Հպարտանում եմ Բրիգամ Յանգի հաստատակամությամբ ու կարողությամբ: Զարմանում եմ, թե ինչ հոգու և սրտի տեր մարդու էր Եկեղեցու նախագահ ընտրել Աստված 20-րդ դարի կեսերին՝ կանչելով Ալբերտ Սմիթին: Խոր ակնածանքով եմ լցված մեր Եկեղեցու մնացած բոլոր նախագահների նկատմամբ, որոնք բազում նեղություններ կրելով, առաջ են տարել Աստծո աշխատանքը և 6 անդամից Եկեղեցին աճել է՝ այսօր ունենալով ավելի քան 15 միլիոն անդամ: Վերջապես առաջին ճշմարտությունը, որ ես հասկացել եմ, դա այն է, որ Աստված ապրում է: Նա մեր Հայրն է: Մենք Նրա զավակներն ենք: Ես հավատում եմ Աստծուն, մեր Հավերժական Հորը և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին և Սուրբ Հոգուն: Յուրաքանչյուր օրհնություն, արարողություն, կարգում, գործողություն կատարվում է Հիսուս Քրիստոսի անունով: Սա Նրա Եկեղեցին է և կրում է Նրա անունը: Ահա այս վերոհիշյալից ելնելով, ես անկաշկանդ վստահությամբ շարունակում եմ կիսվել իմ վկայությամբ: ■

Ընտանեկան նկար

Երեխաների Միությունն օգնում է և՛ երեխաներին, և՛ ծնողներին

Քրիստինե Սիրադեղյան, Աջափնյակ ծուխ, Երևան Հայաստան ցից

Ուրջ 13 տարի է, ինչ ծառայում եմ Եկեղեցու Երեխաների Միությունում: Ես շատ երջանիկ եմ, որ հնարավորություն ունեմ իմ սեփական երեխաների հետ միասին եկեղեցու մյուս փոքրիկներին ևս ուսուցանել՝ ճանաչել Հիսուս Քրիստոսի ավետարանը: Այս ծառայությունն ինձ և իմ ընտանիքին տվել է բազում օրհնություններ և վկայություններ եկեղեցու ճշմարտացիության մասին:

Ամեն անգամ, երբ պատրաստվում ենք միջոցառման, ես հիանում եմ մեր Միության փոքրիկ հրաշքներով, ովքեր շատ գեղեցիկ ձևով

Երեխաների Միության ներկայացում

մատուցում են իրենց երգերն ու բեմադրությունները, որոնք նվիրված են Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:

Մի անգամ նրանք բեմադրություն էին ներկայացնում Ջոզեֆ Սմիթի ընտանիքի մասին: Բոլոր երեխաները հագել էին 19-րդ դարի հագուստներ և այնքան ոգեշնչված էին կատարում իրենց դերերը՝ հավատքով և սիրով, որ իմ աչքերից ուրախության արցունքներ հոսեցին: Նրանց հրաշալի կատարումները մեծ ուրախություն պարգևեցին նաև միջոցառմանը հրավիրված մարդկանց:

Երեխաներին շատ են օգնում մեր օրհներգերը: Ամեն մի երգ ուսուցանում է նրանց լինել բարի, հնազանդ, սիրել բոլորին, հետևել Հիսուս Քրիստոսին և պահել Տիրոջ պատվիրանները: Մի անգամ, կիրակնօրյա դասի ժամանակ, երեխաների ձեռքերին կապեցինք փոքրիկ ժապավեններ և ասացինք, որ այդ ժապավենները պետք է կապած մնան մինչև մյուս կիրակի՝ որպես հիշեցում (դա մեր դասի թեման էր): Դասի նպատակն էր՝ ամեն օր հիշել, որ պետք է օգնել մայրիկներին և ընտանիքի մյուս անդամներին: Հաջորդ կիրակի մի քանի մայրեր մոտեցան և շնորհակալություն հայտնեցին մեզ, ասելով, որ իրենց երեխաների հետ երբեք այդպիսի հրաշք տեղի չէր ունեցել: Նրանք ամբողջ շաբաթ օգնել էին իրենց ընտանիքի անդամներին:

Որպես չափահասներ, մեր օրինակը՝ կիրակի օրը սուրբ պահելը, սուրբ գրությունները կարդալը, ընտանիքով աղոթելը, սուրբ գրություններն ընտանիքով ուսումնասիրելը, եկեղեցում ծառայելը և ակտիվ լինելը, կօգնի երեխաներին սեր զարգացնել Աստծո հանդեպ և հետևել Նրա ապրող մարգարեներին: Տանը և եկեղեցում հարգանք և հավատարմություն դրսևորելը մեծ ազդեցություն կթողնի մեր երեխաների և նրանց ապագայի վրա:

Ես գիտեմ, որ Աստված սիրում է մեզ, մեր ընտանիքները և մեր շատ սիրելի երեխաներին: ■

Աստված օգնում է փորձություններ հաղթահարելիս

Մանյա Գասպարյան, Երևան ճյուղ, Երևան Հայաստան ցից

Ես եկել եմ եկեղեցի 2002 թվականին: Մկրտվելուց ու Սուրբ Հոգին ստանալուց հետո ճյուղի նախագահն ինձ ծառայության կանչեց՝ ուսուցանելու երիտասարդների Կիրակնօրյա դպրոցի դասանում: Ես մի պահ շփոթվեցի և ասացի, որ, հավանաբար, չեմ կարող այդ ծառայությունը կատարել, սակայն համաձայնվեցի ու Աստծո զորությամբ ու օգնությամբ և նաև մեծ ուրախությամբ սկսեցի ծառայել: Մի քանի տարի անց հանձնարարությունս փոխվեց և սկսեցի դասավանդել նոր անդամների «Ավետարանի սկզբունքներ» դասարանում: 2007թ. աղջկաս հետ միասին մեկնեցինք տաճար և հոգևոր մեծ փորձառություն ունեցանք: Ես միշտ ակտիվ անդամ եմ եղել, մասնակցել եմ բոլոր ժողովներին ու դասերին, հաճախ ելույթներ եմ ունեցել: Միշտ մասնակցում էի եկեղեցու բոլոր միջոցառումներին, սակայն, ցավոք, վերջին երեք տարիների ընթացքում հայտնվեցի լուրջ փորձությունների մեջ: Ունեցա հարազատի կորուստ, մի շարք սթրեսների ենթարկվեցի, որը բացասական անդրադարձավ իմ թե՛ ֆիզիկական, և թե՛ հոգեկան վիճակի վրա: Ես սկսեցի թուլանալ և հուսահատվել, սակայն երբեք չհեռացա Աստծուց: Փորձություններս չէին թեթևանում և ես սկսեցի ավելի շատ կարդալ և ուսումնասիրել սուրբ գրությունները:

Շատ էի կարդում Գերագույն համաժողովի ուղերձները Լիահոնայում, որոնք ինձ մխիթարում էին և ոգեշնչում: Մի անգամ կարդացի, որ Աստված խոստանում է նրանց, ովքեր հավատարիմ են Իրեն, հավատում են Իրեն, վստահում և ապավինում են Իրեն, որ երբեք չի թողնի իրենց չարչարանքների և փորձությունների մեջ, այլ մի օր դուրս կբերի նրանց իրենց փորձություններից, բայց Իր ուրույն ժամանակին և ուրույն ձևով: Դրանից հետո ես նոր ուժ ստացա, հույսս մեծացավ, հավատքս աճեց և ես սկսեցի էլ ավելի կառչել Աստծուց, գիշեր-ցերեկ աղոթել և օգնություն խնդրել: Հետագայում կարդացի Եկեղեցու ղեկավարներից ևս մեկի ուղերձն այն մասին, որ պետք չէ Աստծուն շնորհակալություն հայտնել միայն օրհնությունների համար, այլ պետք է շնորհակալություն և երախտագիտություն հայտնել Աստծուն, երբ հայտնվում ենք փորձությունների մեջ, որովհետև Աստված մեզ փորձություններ է տալիս մեր օգտի համար, որ մենք կատարելագործվենք, որ Աստծո հանդեպ մեր հավատքը, վստահությունը ամրանա և մեր հույսը մեծանա առ Աստված: Այս գիտելիքն ինձ նոր ուժ տվեց և ես սկսեցի համբերությամբ տանել փորձությունները: Երբ իմ վերաբերմունքը փոխվեց, Աստված կամաց-կամաց սկսեց ինձ դուրս բերել այդ վիճակից: Ես վկայություն ստացա այս ճշմարիտ խորհրդի վերաբերյալ. «Նրանք, ովքեր մի կողմ են դնում դառնության շիշը և փոխարենը բարձրացնում են գոհության գավաթը, կարող են ճաշակել բժշկության, խաղաղության և հասկացողության հյութից» (Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Երախտապարտ լինել ցանկացած պայմաններում», Լիահոնա 2014թ. մայիս, էջ 70): ■

Աստծո հրաշագեղ տունը

Սիրանուշ Մոսոյան, Արաբկիր ծուխ, Երևան Հայաստան ցից

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ինձ հայտնի էր դեռ շատ վաղուց, իսկ երբ պաշտոնապես հաստատվեց Հայաստանում, ես անչափ ուրախացա: Մկրտվեցի և դարձա լիարժեք անդամ, ապա կանչվեցի ուսուցչի ծառայության: Մի օր էլ ստացա տաճարի երաշխավորագիր և տաճար մեկնող մյուս անդամների հետ միասին մեկնեցինք դեպի Տիրոջ տաճարը՝ Շվեյցարիայում: Բարեհաջող տեղ հասանք, սրտի թրթիռով մտա տաճար ու ասես երկրային կյանքից մտա երկնային կյանք: Տաճարային արարողությունները, ասես խոսում էին իմ հոգու հետ: Այն, ինչ երազել էի դեռ մանկուց, մեկ առ մեկ տեսա ու զգա այնտեղ: Եվ, քանի որ գիտեմ գերմաներեն, ավելի ազատ եղավ շփումս բոլորի հետ:

Հրաշալի՜ է տաճարը: Այն էջ առ էջ թերթում էր, ասես, մեր հոգու թերթերը. . . Ես հիացած, սրբությամբ լիացնում, վեհացնում էի իմ հոգին: Ես, ասես, տեսնում, զգում ու շոշափում էի անտեսանելի բաները. . . Ես կատարեցի իմ սուրբ պարտքը ննջեցյալ հարազատներիս համար: Եվ կարոտը նրանց հանդեպ՝ հոգուս ծարավը հագեցրի տաճարում ու կարծես տեսա նրանց, հոգուս անբիծ սիրով զրուցեցի նրանց հետ . . . Տիրոջ տաճարը հրաշք է. . .

Եվ յոթ օր շարունակ ես հմայված էի նրա հոգևոր գեղեցկությամբ, նրա օրհնություններով, պարգևներով:

Հոգիս ամբարված էր այդ ամենով: Շփումը տարբեր ազգերի մարդկանց հետ տաճարում շատ հեշտ էր: Թարգմանելու կարիք չկար: Եվ բոլոր ազգերի մարդկանց հոգիները այստեղ խոսում էին մեկ լեզվով՝ հոգու լեզվով, աստվածային լեզվով: Եվ ես խորապես հասկացա, որ եկեղեցու նպատակն է՝ անդամներին նախապատրաստել հավերժ ապրելու սելեստիալ կամ երկնքի արքայությունում: ■

Սիրանուշ Մոսոյանը

Փրկագնող զորությունը

Գրիգոր Գալդունց, Աշտարակ ճյուղ, Երևան Հայաստան ցից

Իմ ողջ միսիայի ընթացքում, որը ծառայել եմ Անգլիայում, ես զգացել եմ, որ մեծ ցանկություն ունեմ առաջ շարժվելու, առաջադիմելու ու մեծ գործեր անելու մարդկանց զավակների մեջ: Բայց ամեն անգամ, երբ փորձում էի առաջ շարժվել՝ ձախողվում էի, վայր էի ընկնում, զգում էի, որ անկում եմ ապրում: Ամեն անկումից հետո ես մխիթարություն էի ստանում Տիրոջից, բարձրանում էի, նորից ոտքի կանգնում, բայց առաջադիմություն կարծես չկար: Այդպես ամեն օր, ամեն շաբաթ, ամեն ամիս. փոխվում էր ծառայության վայրը, փոխվում էր միսիայի գործընկերս, ու այդ նույն փորձառությունը կրկնվում էր նորից ու նորից: Ես զգում էի, որ Տիրոջ սերը բավարար է, որ բարձրացնի ինձ, բայց չէի հասկանում, թե ինչու նա չի օգնում, որ առաջադիմեմ: Այդ ողջ ընթացքում ես հոգու ցավ էի զգում, ինչպես մեկը, ով ֆիզիկապես ընկնում է:

Ամեն առավոտ ես ուսումնասիրում էի սուրբ գրությունները և մի օր, երբ խորհում էի Հակոբի խոսքերի շուրջ, «և հարությունը պիտի անպայման գա մարդուն՝ անկումի պատճառով» (2 Նեփի 9.6), ես ինձ հարց տվեցի. ինչո՞ւ եմ ես ընկնում այդքան անգամ և ամեն անգամ Տերը բարձրացնում է ինձ: Ապա մի հասկացողություն եկավ, որ Հիսուս Քրիստոսի փրկագնման զորությունն ամբողջապես հասկանալու համար, ես պետք է վայր ընկնեի: Ամեն անկում ինձ մղել է զգալ, փորձարկել Փրկչի փրկագնման զորությունը: Ու անկումներիս մեծ քանակի շնորհիվ ես եկել եմ այդ զորության ավելի մեծ գիտակցման: Ինձ համար շատ դժվար էր անցնել այդ ամենի միջով, բայց հիմա երջանիկ եմ, որովհետև անսասան վկայություն ունեմ, որ «բոլոր բաները

Ընտանիքը ճանապարհում է Երեց Գալդունցին միսիայի

եղել են Նրա իմաստությամբ, ով գիտի բոլոր բաները»: Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսի քավությունը ոչ միայն փրկագնում է մեզ Ադամի անկումից դեպի հավերժական կյանք, այլ նաև փրկագնում է մեզ ամեն անգամ, երբ մենք ընկնում ենք, անկախ նրանից՝ այդ անկումը մեր ընտրությամբ է, թե ոչ: Ինչպես Ադամը վերականգնվեց Հավերժական Հոր ներկայության մեջ, որում գտնվում էր մինչև իր անկումը, այնպես էլ մենք կվերականգնվենք այն բոլոր բաների հետ, ինչ կորցնում ենք անձնական անկման պատճառով. վերականգնում, որը կգա կա՛մ այս աշխարհում, կա՛մ էլ գալիք կյանքում: Աստծո նպատակներն արդար են ու Նրա սերը հավերժական է մեր հանդեպ: Նա հոգում է մեր մասին, քանի որ մեծ գնով՝ Իր ամենահավատարիմ Որդով է վճարել մեր փրկության համար: Վերջիվերջո ես հասկացա նաև, թե ոտքի կանգնելուց հետո, ինչու չէի ես առաջադիմում: Պատճառն այն էր, որ երբ փորձում էի միայնակ առաջադիմել՝ ձախողվում էի: Որպես միսիոներ՝ ես Տիրոջ գործն էի անում, բայց Տերն ինձ ուսուցանում էր, որ առանց Նրա չեմ կարող առաջադիմել, քանզի Նա է որթատունկը, առանց որի ճյուղերը պտուղ չեն բերի (Հովհաննես ԺԵ.4–5): Առաջադիմությունը գալիս է, երբ մնում ենք Նրա հետ: Սա մի վկայություն է, որը ձեռք բերեցի միսիայի ընթացքում: ■

Միսիայի ժամանակ

ARMENIAN